ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբերի 2025 թ. թիվ 322 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ԴԽ/15.2/41425-2025 հանձնարարականը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և վերահսկող համատեղ հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին նախագահին՝ /Վ.Սուքոյան/ մինչև 2026 թվականի փետրվարի 1-ը մարզում անցկացնել անասունների համատարած հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել ինձ:
3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Վ.Սուքոյանի վրա:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-12-09 12:56:16 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ. դեկտեմբերի 09
Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
09.12.2025թ. թիվ 322 - Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Վ.Սուքոյան	-	Հանձնաժողովի նախագահ, մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Ա.Աչինյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության պետ
Ա.Ամիրխանյան	-	մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Ա.Ամիրխանյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Դիլիջան/
Գ.Վիրաբյան		-ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ ևտարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Բերդ/
Ա.Խաչատրյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Իջևան/
Մ.Մամյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Նոյեմբերյան/:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

09.12.2025

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAŃ 2412760241